

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

20 յուլիսի, 9 ժ. 50 ր.

ՇՆՈՐՀՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՆՔ ՆԻԿՈԼԱՅ Բ. ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍՐ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԹԱԳԱՒՈՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ՄԵԾ ԻՇԽԱՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ *և այլն, և այլն, և այլն... յայտարարում ենք մեր հաւատարիմ հպատակներին, որ հետևելով պատմական մեր աւանդութիւններին, Սլաւօնական ժողովուրդների հետ կրօնով ու արիւնով միացած Ռուսաստանը այդ ազգերի բախտին երբէք անուշադիր և անկարեկից չի եղել։ Ռուս ժողովրդի եղբայրական զգացմունքներն առանձին ուժգնութեամբ*

ու համերաշխութեամբ արտայայտուեցին վերջին օրերը դէպի սլաւոնները, երբ Աւստրո-Հունգարիան Սերբիային յայտնեց կանխամտածուած և անընդունելի պայմաններ։ Աւստրո-Հունգարիան արհամարեց Սերբիայի կառավարութեան զիջող և խաղաղասէր պատասխանը, մերժեց Ռուսաստանի բարեացակամ միջնորդութիւնը, շտապով դիմեց զէնքի և յարձակում գործելով ռմբակոծեց անպաշտպան Բելգրադը։

Ստեղծուած պայմաններն ստիպեցին ձեռք առնել զգուշութեան անհրաժեշտ միջոցներ։ Եւ Մենք հրամայեցինք զօրքը և նաւատորմիղը պատերազմական վիճակի մէջ դնել։

Ինչպէս մեր հպատակների արիւնն ու կարողութիւնը՝ մեր բոլոր ջանքը գործ դրինք, որ բարեկամական յարաբերութիւններով սկսուած բանակցութիւնը խաղաղասիրական ելք գտնի։ Աւստրիայի դաշնակից Գերմանիան, հակառակ մեր դարաւոր բարի հարևանութեան յոյսերին, և չհաւատալով մեր հաւաստիացումներին, թէ մեր ձեռք առած միջոցները ոչ մի թշնամական նպատակ չունեն, սկսեց ջանք գործ դնել, որ անմիջապէս փոխուեն այդ կարգադրութիւնները։ Եւ իր այդ պահանջի նկատմամբ

մերժում ստանալով յանկարծակի պատերազմ յայտարարեց Ռուսաստանին։ Այժմ մեր առաջ է դրուած ոչ թէ յանիրաւի թշնամանքի ենթարկուած մեր արիւնակից երկրի գործին միջամտութեան խնդիրը, այլ Ռուսաստանի ամբողջութեան, պատուի, արժանապատուութեան և նրա մեծ պետութիւնների մէջ գրաւած դիրքի խնդիրները։

Մենք հաստատ հաւատում ենք, որ Ռուսական երկրի պաշտպանութեան համար համերաշխութեամբ ու անձնազոհութեամբ ոտքի կրկանգնեն մեր բոլոր հաւատարիմ հպատակները։

Փորձութեան ահարկու ժամին թող մոռացուին ներքին վէճերը, թող աւելի ամրանայ թագաւորի միութիւնը նրա ժողովրդի հետ և ինչպէս մի մարդ՝ ոտքի կանգնած՝ Ռուսաստանը յետ մղէ թշնամու յանդուգն յարձակումը։ Խորապէս հաւատալով մեր գործի ճշմարտութեանն ու խաղաղ ապաւինելով Ամենակարող Նախախնամութեանը, Մենք մեր աղօթքներով սուրբ Ռուսաստանի և նրա քաջարի զօրքի վրայ ենք հրաւիրում Աստուծոյ օրհնութիւնը։

Տրուած է Պետերբուրգում, յուլիսի քսաներորդ օրը, Քրիստոսի ծննդեան 1914-րդ և Մեր թագաւորութեան քսաներորդ տարին։

Իսկականի վերայ ստորագրել է Նորին Կայսերական Մեծութիւնն իր ձեռքով ՆԻԿՈԼԱՅ